


ալա 2-25  
կափ՝  
օլկա №

# ԲԱՐԵԿԵՆԴԱՆ ՕՐԵՐԻՆ

## ՅԱՐԾԱՐ

### Տ Ա Ղ Ա Չ Ա Փ Ո Ւ Թ Ի Ի Ն



Թ Ի Ֆ Լ Ի Ս

Տպարան Յովհաննէս Մարտիրոսեանցի:

Тш. И. МАРТИРОСИАНЦА, Орб. ул. № 1-2.

1894

398.5  
F-35

Ա Ր Մ .  
2-25a

APR 2010

# ԲԱՐԵԿԵՆԻԱՆ ՕՐԵՐԻՆ


398.5

P-35

## ՅԱՐԲԱՐ

ՇԼԵԸ

## Տ Ա Ղ Ա Չ Ա Փ Ո Ւ Թ Ի Ւ Ն



### Թ Ի Փ Լ Ի Ս

Տպարան Յովհաննէս Մարտիրոսեանցի:

Тип. И. МАРТИРОСИАНЦА, Орб. ул. № 1—2.

1894

01 MAR 2013

ՄԻՋՊՈՒԿԱՆԵՐԻ ԿՐԹԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ԳՅՎԳՅՑ

Дозволено цензурою, Тифлиси, 15-го января 1894 г.



39997-60

«ՀԱՅԿՈՒՀԻ» <sup>1)</sup>

Ղիմշատ հասակը՝ սիրուն զըլուխը,  
Նազուք իրանը՝, նաշխուն ձեռնորդ,  
Աստուածածնայ է՝ պատկեր, Հայկունհի <sup>2)</sup>:

Թուխ-թուխ մագերըրդ՝, մարմառ ճակատըր,  
Կամար ունքերըրդ՝, այդ վառ աչերըր,  
Սըրտի խընդունք է՝, չըքնադ, Հայկունհի:

Ջարմադ թուշերըրդ՝, մեղրամոմ քիթըր,  
Բարակ շըթունքըրդ՝, մեռոն բերանըր,  
Կեանքի բալզամ է՝, նոյնիսկ, Հայկունհի:

Երկշար ատամըրդ՝, բըլբըլ լեզուակըր,  
Սըրտիդ վառ խանըր՝, ձայնիդ քընարըր,  
Էլթեան շունչ է՝, մարդու՝ Հայկունհի:

<sup>1)</sup> Հարս և օրիորդ. —խօսքս լազտուածնների մասին չէ:

<sup>2)</sup> Թէև «Հայկունհի» բառի շեշտը «ի» տառի վրայ է. սակայն չափի ներդաշնակութիւնը պահելու համար, իբրև բացառութիւն շեշտը կարելի է հնչել «ու» տառի վերայ:

Հաքար ծընօտըդ՝ քընքոյշ «բուխսիրդ,  
Թաւիշ այդ կնրծքըդ՝ շամամ ծըծէրըդ,  
Կեանքի ճաշակ է՝ անոյշ, Հայկունհի:

Տիրոջ պարզեւը՝ շէնք ու շնորհքըդ,  
Անոյշ խօսակըդ՝ անկեղծ նայուածքըդ,  
Պայծառութիւն է՝ շատ մեծ, Հայկունհի:

Սյդ գըրավելըդ՝ շարժվիլ - մանգակըդ,  
Ձուրթիդ դողալը՝ անմեղ ծիծաղըդ,  
Կեանքի արև՝ է՝ պարկեշտ Հայկունհի

Անշրուանյ, չափաւոր ապրելըդ,  
Քո այդ պարզ նիստուկեանց անելըդ,  
Խիստ անգին գոհար է, Հայկունհի:

Ոռաւօտ մութումս զարթնելըդ,  
Սենեկիդ ներսուգորս սարքելըդ,  
Մեծ բաղդի նըշան է, Հայկունհի:

Քընքուշիկ մատներով կաթելըդ,  
Մանուկներ(դ) խընամիլ փընջելըդ,  
Երկնային շընորհք է, Հայկունհի:

(Կէսօրին)  
Քո ձեռով պատրաստած լաւ ճաշըդ,  
Գառնուկներ(դ) շուրջ սեղան նըստանծքըդ,  
Յանկալի բարիք է, Հայկունհի:

(Դրիզուն)  
Անպաճոյճ ու համեստ հաղնվելըդ,  
Ճուտերիդ ձեռքընանծ ժամ գնալըդ,  
Ըսքանչանք սրբոց է, Հայկունհի:

(Գիշերը)  
«Սիրո՞ւնի կ, ձագուկներ» կանչելըդ,  
Կաթոգին վեհսիրով գըրկելըդ (նորանց)  
(Գըրզվելով, հըրճվելով պառկցնելըդ,  
Հայտրդու բաղձանք է, Հայկունհի:

Յետ այսու ամուսնուդ գըրկելըդ,  
Աչք-աչքի շուրթ-շըրթի կպցնելըդ,  
Գըրախտի աղբիւր է, Հայկունհի:

Մեղմ շըշնջ սիրալիր Հայացքըդ,  
Խանդավան սիրտ-սըրտի կպցնելըդ,  
Երկնային պատգամ է, Հայկունհի:

Թըրթըռուն շուրթերի համբոյրըդ,  
(նոցա) Երջանիկ աչերին պինդ տակըդ,  
(Ոգելից կենսատու աչերըդ,  
Հըշտակաց խընդունք է, Հայկունհի:

Երկուսով միասին զիմելրդ,  
 Ինչպ քընած սիրունիկ գառներրդ,  
 (Առ Աստուած մաղթութիւն հայցելրդ,  
 «Կենդանի պատկեր» է, Հայկունհի:

Քեզանով ըստեղծած (ըն)տանիքրդ,  
 «Օջաղ»իդ, ամուսնուդ, որդոցրդ,  
 Յոյց տըւած անկեղծ սէր, խընամքրդ,  
 Սըրբութեան նըշան է, Հայկունհի:

Երբ չ'ապականւած՝ անբիծ Հայորդին  
 Կըխնդրէ քո ձեռք՝ առանց օժիտիդ,  
 Երբ դու էլ առանց՝ յուսոյ մօդային  
 Կըյայտնես նորան՝ փափազը սընտիդ.  
 Երբ կըկատարուի՝ պատգամ երկնային  
 Աստուածային ուխտ՝ կարգը պըսակիդ.  
 «Արքայութիւն է՝ այս մեր աշխարհը»  
 Երջանիկ գոյգրդ՝ կ'ասէք, Հայկունհի:

Թիֆլիզ 11-ն սեպտ. 1888 ամի Յ. Խ. Յ.

Պատասխան «Հայկունի»-ին

Ն Ա Ջ Ե Լ Ի <sup>1)</sup>

Ճըմլիկ հասակըդ՝, տաշած գըլուկըդ,  
 Սեղմած իրանըդ՝, «լօնդիկ» ձեռնտըդ  
 Մաղթաղենայ է՝ պատկեր, Նազելի:

Չէկ-չէկ մազերըդ՝, ռանտած ճակատըդ,  
 Չինած ունքերըդ՝, որսկան աչերըդ,  
 Խաբսի միջոց է՝ սըրտի, Նազելի:??

Քըսած թուշերըդ՝, «կուռնօս» այդ քիթըդ,  
 Ներկած շուրթերըդ՝, ձիւթած բերանըդ  
 Կեանքի բալզամ է՝, նոյնիսկ, Նազելի:??

Մէջ-մէջ ատամըդ՝, թութակ լեզուակըդ,  
 Ձայնիդ քըրքիջը՝, ազուալ քընարըդ  
 Իւութեան շունչ է՝ մարդու, Նազելի:??

Կոտրած քո գունչըդ՝ փափուկ «լեապուռըդ»  
 «Մեկած» այդ կուրծքըդ՝, ճըմլած ճըծերըդ  
 Կեանքի ճաշակ է՝ անհամ, Նազելի:??

1) Մեր երիտասարդներին, նաև ամուսնացած «գըմբի»ներին՝  
 սղբուկի պէս ճըծող՝ օտարագրի լրպգտուած կինարմատ:

Արհմի պարզեւը՝ այդ շէնք ու տեսքը,  
Քո լիրբ խօսակրգ՝ շինծու նայածքը  
Պայծառութիւն է՝ շատ մեծ, Նազելի:??

Այդ նազուրագը՝ «Բուլդի» մանգալը,  
Չըրթունք լիզելը՝ վապաշ ծիծաղը:  
Մահուան արեւ է՝ անզուժ Նազելի:

Խիստ շրտայլ, անկանոն, ապրիլը,  
Տըզրուկի նիստուկեանց անելը  
Չահուելու աղբիւր է, Նազելի:

Առաւօտ ժամտասին գարթները,  
Սենեկիդ անկարգսարք պահելը,  
Ծանջ վրկայ մեծ բագը է, Նազելի:

Զանազան «մօղա»ի «զակագ»ը,  
Չընիկներ(դ) լուանալ գուզիլը,  
Երկնային մեծ ձիւրք է, Նազելի:??

(Կէսօրին)  
Ուրիշի պատրաստած ճաշելը,  
Սիրեկներ շուրջ սեղան նրստածքը:  
Յանկալի բարիք է, Նազելի:??

Իրիգուն մի բեռ շոր Հագներդ,  
(Քամակիդ մեծ «տիւրնիւր» կապելը),  
Ղայրաթով բոլվարներ չափելը  
(Մեծ յուսով, կեղծ սիրով նազելը  
Այ ու ձախ ամենքից սիրվելը)  
Փողոցի պարծանք է, Նազելի:

(Գիշերներ)  
Անուշհոտ զգեստներ Հագներդ,  
(Հայելու առաջեւ կովկելը),  
Հոտաւէտ փոշիով, օձվելը  
Լրկտաձի բաղձանք է, Նազելի:

Յետ այնու սիրեկներ ժողվելը,  
Կեղծ սիրով նորանց հետ պազվելը,  
«Ջէննաթ»ի աղբիւր է, Նազելի:

Լիրբ ճըջալ, վապաշոտ նայելը,  
Տըւփական սիրտ-սըրտի սեղմիլը  
Աստղակայ պատգամ է, Նազելի:

Անկենդան շուրթերի Համբոյրը,  
(Նորանց) սիրավառ աչերին պինտ տակը,  
(Չըթ-վըթան արնալից աչերը),  
Բաքոսին խընդունք է, Նազելի:

Գիրկ-զրկւած դէպընթրիք վազելլդ,  
 Զանազան խրմիչքներ կոնձելլդ  
 (Այծի պէս տըր-տինզներ անելլդ)  
 «Ֆալետ»ի պատկեր է, Նազելի:

Քո ձեռով քանդոտուած տըներըդ,  
 Քարուրած մանուկներ նետելլդ,  
 Զուն ու մարդ հաւասար պաշտելլդ  
 Կըրթութեան նըշան է, Նազելի??

Երբ ապականուած՝ անմխտ Հայորդին՝  
 Կըրպանները լիք՝ կ'անէ քեզ խընդիր...  
 Երբ դու էլ զոհւած՝ փողի ծալքերին  
 Կըյայտնես նորան՝ տըռփանքը սըրտի(դ)...  
 Երբ կըկատարուի՝ պատգամ (մ)արդկային—  
 Զ'աետուծային ուխտ՝ լոյծը պըսակիլ...  
 «Ճիշդ որ «ջէննաթ» է՝ այս մեր աշխարհը,»  
 Պըղծուած էդ զոյգըդ՝ կ'ասէք Նազելի...  
 Թիֆլիզ, 16 սեպտ. 1888 ամի 3. Խ. 3.

Հ Ա Յ Մ Ա Ր Գ

Կ'ուզեմ, դու հայ մարդ՝, լինել երջանիկ,  
 —Քեզի նուիրիր՝ չըքնաղ, անուշիկ  
 Կապոյտ շքետաւոր՝ նըշան (ա) զգեստով  
 Սուրբ, կոյս Հայկուհուն՝ համով ու հատով:—

Համեստ նիստուկեաց՝, մեղու փութաջան,  
 Հագնուտ անշըռայլ՝, տիպար բարութեան,  
 Անկեղծ սէր բուրո՞ղ՝, գորովագուլթ մայր,  
 Սըրտիդ յենարան՝ —կեանքիդ լոյս յարմար:

...Քաց ինձ ներեցէք՝, իմ սիրելիներ,  
 Կարող չեմ ասել՝ այդպէս սուրբ բաներ:  
 Առանց ամչելու՝ ես ինքըս ինձնից,  
 Գեռ լեզուիս ծայրին՝ դառնում եմ խօսքից:

Եկէք եղբայրներ՝, ուղիղըն խօսեմք,  
 Յանցանք չէ՞ արդե՞ք՝ մեզի՛ նուիրեմք,  
 Այդ նոյն իսկ մեռոն՝ սըրբուհիներին,  
 Նորանց էլ զոհեմք՝ մեզ նը՛մաններին...

Ըստոյգ է, որ մենք՝ կորած ենք բարքով —  
 —Ամեն շըրջանի՛ ամէն կոչումով,  
 Ծառայ է թէ «բիջ»՝ քարվանսարայի՛,  
 Անկիրթ աղա թէ՛ տէր մե՞ծ ուսումի:

Տըխմար պատանի՛, թէ երիտասարդ,  
Մեծ հայր գերդաստան՝—տարիքըն անց մարդ,  
Թուշերը կարմիր՝, թոքսխտով մաշած,  
Կըրպանը ջուխտիք՝ օրերով քաղցած.

Քոյորը մէկ է: Գիշեր ու ցերեկ  
Քրծնում—լրպղտում՝ չանկը՝ստում ենք մենք  
«Քուրսագ»ով ընկած՝ կեղտոտ շ. նրման,  
«Նազեի»ի պիղծ՝ շեմքերը զըռան...

Դընենք երկաման՝ խոզի առաջին,  
Համով կերակուր՝ լըցնենք, թող, միջին.  
Իսկ միւտըն լըցնենք՝ կեղտով զըզկելի  
Քանի մի օրուան՝ պըղծով գարշելի:

(Մըրուր կաթսայի, կեղտեր ամանի,  
Փըսլինք խոհրարի՛, փըշրանք ածուխի,  
Կըտիտ ոչխարի՛ հոտած կըտորներ...  
Խառնած միատեղ՝ կեղտի տեսակներ:

Դընենք ու տեսնենք՝ ո՞ր անման խոզի(ն)  
Կըտայ ախորժակ՝ իշտանհ աւելի.  
Անոյշ համեմած(ը)՝ մաքուր պատրաստած,  
Թէ անպականուած՝ կեղտով խառնակած(ը):

Ճաշակը «մուռտան»՝ մուռտան» ամանին  
Վըրայ կըպըծնի՛ աչքերը գետնին.  
Ձայնով անճուռնի՛, դուռնչով զըզուելի  
Կըլակի—լակի՛ տիղմով յատակի:

Յետոյ նա եթէ՛ մաքուր ամանին  
Դուռնչով մօտենայ՝ հոտիցըն անդէն  
Անբիծ անարատ՝ աման կերակուր  
Իսկոյն կըգառնան՝ ինչպէս կեղտումուր:

Քաղքի մէջ ապրող՝ «ջահիլ-ջիվաններ»  
Ի՞նչէր ենք թէ ոչ՝ «Սաղ»ի կեղտաներ  
Փորոզ եռանդով՝ մէջն էլ թաւարող  
«Սաղ»ի<sup>1)</sup> զըզկելի՛ խոզեր թըրւող...

Ի՞նչէր ենք թէկուզ՝ որդոց ու տանտէր  
Հայրեր մեծատուն՝ յարգոյ «կուպեց»ներ:  
—Էլի այնտեղի՛ տիղմի մէջ պառկած  
(Գոմշի մեծութեամբ՝ ճարպով լըցըրւած)  
Տեսքով անճուռնի՛ խոզեր հաստացած:

Իսկի տեսած կամք՝ ինչպէս այդ խոզեր:  
»Սաղ«ի աղպերում՝ ընկած կըտորներ

1) Թիֆլիզի ամենակեղտոտ թաղի անունն է՛:



Կեղտի մէջ կըրկին՝ մէկ լաւ թաթալում.  
Յետոյ լազաթով՝ հնց են լնփլնփում...

Այդ նոյն լազաթով սիրում ենք, պաշտում  
Ամէն վավաշոտ՝ «մուռտան» նազելուն  
— Սիրոյ վաճառքից՝ ընկած ու փրթած —  
...Այդպիսիներէս՝ չըպէտք է թըքած...

Իսկի տեսած կա՞ք՝ — երբ փոփոցներում  
Էք շան յետեւից՝ շըներ են թափվում.  
(Բոլորն էլ ցեխոտ՝ կեղտում շաղաղանք.  
Սիրոյ կըրակից՝ էրուած-խորովված...)

Տեսնողըն իսկոյն՝ աչքերըն է ծածկում.  
Սաստիկ մեծ զըզուանք՝ գարշանք է զգում:  
Փարդիկ շընացոյ՝ անգամ չեն կարալ  
Այդպէս տեսարան՝ գլխի մէջ տեղ տալ:

Բայց այն էլ տեսէք՝ (որ) այդպիսի շըներ  
Ըզզում են, կարծես՝ (որ) հեղեղից իվեր  
Դորանից աւել՝ եղել չէ բընաւ  
Խընդունք հեշտալի՝ վայելքը անբաւ:

Համոզուած են որ՝ ներկայ մեր կեանքում  
Ծընւած են միայն թըրեւ գալ քուչում  
Թափանողներին՝ պըջից հոտոտել...  
Լըկվել — պըղծըվել՝ — օօօ սէր վայելել...

Այդպէս ենք և մենք՝ շատերըս, մարդիկ:  
— Թողած ազնիւ կեանք՝ խաղաղ ընտանիք,  
Սուրբ կոյս ամուսին՝ կայտառ զաւակներ,  
Հաւատ յոյս և սէր՝ բաղդով լիք օրեր:

Ընդ միշտ մոռացած՝ աշխարհըս անհուն,  
Գիշեր ու ցերեկ՝ քընած ու արթուն.  
Վատնում ենք ի գուր՝ պարգև՝ Աստուծոյ  
Հոգի-միտք ու սիրտ՝ — արև՝ մեր յուսոյ:

Գիտէք ո՞ւմ համար՝ — Անյայտ հօր-մօրից  
Ըսկիզբըն առած՝ պըղտոր արիւնից,  
Ծընունդ ապօրէն՝ լըկտի մեծացած,  
Տասըն չորս տարուան՝ մեղքի տակ ընկած.

Անբարոյական՝ լըկտի, լըպըզուած,  
Ամէն սըրբութիւն՝ ոտի տակ տըւած,  
«Սաղ»ի քուչեքում՝ ազպի մէջ ընկած,  
Լաթի պէս կեղտոտ՝ հոտած ու փրթած.

Սիրոյ անազնիւ՝ ծախսովը իրանց  
Մօգնի շորերով՝ շըքեղ զարդարւած  
Տասնեակ սիրեկնի՝ ծոցերըն մըտած,  
Յայտնի շընացոյ՝ վավաշ լիրբ կանանց...

Հոգևոր և մարմնական  
հասարակական կյանքի  
համար անհրաժեշտ  
համարվում է օգնել

Վերականգնելու և  
պահպանելու համար  
անհրաժեշտ է օգնել  
համարվում է օգնել

Համարվում է օգնել  
համարվում է օգնել  
համարվում է օգնել  
համարվում է օգնել

Համարվում է օգնել  
համարվում է օգնել  
համարվում է օգնել  
համարվում է օգնել

Համարվում է օգնել  
համարվում է օգնել  
համարվում է օգնել  
համարվում է օգնել



ՀՀ Ազգային գրադարան



NL0237664

56.721